

ՏԱՍՆԵՐՈՐԿ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան դիմը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:

Առանձին հոմարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն անգլիական մէջ:

Օտարապաշտարարի դիմում են ուղարկել:

Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար, զմարում են
խրատանչիւր քաղին 2 կոպէկ:

Մ Շ Ա Կ

ԼՐԱԳՐԻՆ ԿԱՐԵԼԻ Է ԳՐՎԵԼ

Կ Է Ս Տ Ա Ր Ո Վ

Այսինքն յուլիսի 1-ից ներկայ 1881
թ-ի, մինչև յունիսի 1-ը 1882 թ-ի:

Բաժանորդութեան գինը 6 րուբլ է:
Գրվելու համար պէտք է ուղղակի գրվել
խմբագրութեանը հետեւեալ հասցեով. Тиф-
лис, редакция «Мелк»

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ Յիսկովայի:
Նամակ չին-նախնայանից, Ներքին լուրեր:
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Բազմաթիւ: Խառն:
Աւարտ: Ուղղակի: Ֆրանսիա: Նամակ Աւարտ:
Դիւր: ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: ԷՆՈՒԱԳԻՆՆԵՐ: ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Նամակ
խմբագրին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՅԻՆԵՎԱԼԻՑ

Յուլիս 15-ին

Որքան եւրօպական հրէաները աշխատում են
ամենայն գործում՝ թէ ուսման, թէ արհեստի-
ն ու գեղարուեստների մէջ առաջ գնալ, հա-
կառակ սորա, մեր Արատանի հրէաները, չը
նայելով, որ նորա Ռուսաստանի հովանաւորու-
թեան ներքոյ, ունենալով մարդկային բոլոր ի-
րաւունքները, դարձեալ խնդրած են հին հրէա-
կան համարութեան մէջ, հակառակ են ամենայն
նորութեան և մեծ խոչնդոտ են կազմում ուս-
ման և գիտութեան տարածվելուն:

Մեր հրէաներին որքան էլ ցանկանանք հաս-
կացնել, որ ուսումնարանը մի օգտակար հիմ-
նարկութիւն է հասարակութեան համար, ինչքան
ապագայցիներ և իրողութիւններ ներկայացնենք
նոցա, այնու ամենայնիւ, նրանք յամառու-
թեամբ պնդում են, որ Աստուածաշունչ գրքից
դուրս՝ ոչ մի ուսում չը կայ: Այսպէս երբ մեր
հասարակութեան մէջ սկսում ենք մի ընդհա-
նուր օգտակար գործ արձարծել և ձեռնարկել և
ժողով ենք կազմում նոյն գործի իրագործելու վե-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 18 յուլիսի

«Խելքից պատուհաս» կոմիդիան թարգմանե-
լուց և ներկայացնելուց յետոյ թատրոնի կառա-
վարի իշխան Ամատունիին ինձ մասնաւորապէս
առաջարկում է թարգմանել Գոգոլի նշանաւոր
կոմիդիան «Ревизор»-ը: Քաջալիքով եմ նրա
յայտնած ցանկութիւնից թէ այսպէս և թէ այն-
պէս ամբողջ չորս ամիս ճակատի քրթինք թա-
փելով վերջացնում եմ իշխան թարգմանութիւնը:
Անցած մայիսի 15-ին թարգմանութիւնը ձեռ-
քումս գնում եմ իշխան Ամատունի մօտ: Իմ
առաջարկութեանս, որ նա վերցնէ աշխատու-
թիւնս և վարձատրէ խոստանալով և ուրիշ պիե-
սանիւր էլ թարգմանել հայ բեմի համար՝ իշխանը
իմ թարգմանութիւնս վերցնում ուղարկում է նոր
ընտրած թատրոնական մասնագիտովի քննու-
թեան, որի անդամներն են պ. Գ. Սունդուկեան-
ը, պ. Ս. Արծրունի և պ. Ա. Յովհաննիսեանը:
Անցնում է մի շաբաթ. գնում եմ պ. Ամա-
տունի մօտ մասնագիտովի կայացրած վճիռը ի-

րաբերութեամբ, հրէաները մեր գիւղի մէջ լինե-
լով շատ թուով երկու ազգութիւններից՝ հայերից
և վրացիներից, գործը միշտ խեղդում է հրէա-
ների ձայների բազմութեամբ, քանի որ վերջին
երկու ազգաբնակչութեան ձայները համեմատա-
բար թուով անհշուտ են և այդպիսով ոչ մի գործ
առաջ չէ գնում:

Խառնամեք, հրէաների հոգեւոր գլուխները, ո-
րոնց ձեռքն է Յիսկովայի հրէաների ղեկը ինչ-
պէս կատարող և ուսուցիչ Աստուծոյ բոլոր պա-
տուէրների, լինելով վերին աստիճանի տգէտ,
իրանց ծուռ վարդապետութեամբ Յիսկովայի բո-
լոր հրէաներին քարոզում են այս խօսքերով՝
«Եթէ իրանց որդիներն ուղիւս հասարակաց ու-
սումնարանը, նոքա անհաւատ կը դառնան և
թէ Աստուածաշունչի մէջ կան դեռ եւ այնքան
բազմաթիւ ուսանելիք, որ եթէ մարդ հա-
րիւր տարի ապրի, չէ կարող բոլորը ուսումնա-
պիւրել և թէ՛ կրօնը իրանց արգելում է ուրիշ բան
ուսումնասիրելու»: Այսպէս պահում են իրանց
ժողովրդականներին խորին աղիտութեան մէջ և
բոլոր ջանքը գործ են դնում քանդել ուսումնա-
րանի պէս օգտակար հիմնարկութիւնները, չը
նայելով, որ մեր տէրութիւնը առեւ է իր հո-
վանաւորութեան առկա եղող ազգերին կրօնի և
համոզմունքի ազատութիւնը, և ամենայն ուս-
ումնարանի մէջ թոյլ է տալիս ամենայն դա-
ւանութեան մանուկների համար ունենալ իրանց
կրօնուսուցչը:

Յիսկովայում շատ անգամ արձարծել է տէրու-
թեան կողմից ուսումնարանի բացման խնդիրը
և շատ պաշտօնեաներ եկել են այս գործով,
բայց նա չունեցաւ յաջողութիւն: Վերջը, եթէ
չեն սկսելով, եթէ տարի առաջ Թիֆլիսի հան-
գուցեալ նախագահներ Օրլովսկին նոյն նախա-
դի զարդոցների ղեկավար Ստրելնիցով հետ դա-
ւով Յիսկովայ, մեծ աշխատանքով և սպառնա-
լիքներով համոզեցին հրէաներին ուսումնարանի
բացման հարկաւորութիւնը: Պահանջ յետոյ իւ-
րաքանչիւր տուն պարտաւորվեցաւ կայացած
վճուով տարեկան մի րուբլի Գօրու գանձարանը
մտցնել Յիսկովայի ուսումնարանը պահպանելու
համար:

Ներկայ 1881 տարվայ 15-ին յունիսի, թոյլ-
ուսութեամբ Նորին կայսերական Բարձրութեան
կովկասեան ֆոնարքայի, բացվեց Յիսկովայում
երկու դասարանից բաղկացած տարրական ու-
սումնարան (Двухъ классное нормальное уч-
ище), որ իր կարճատև գոյութեամբ մեզ ան-

մանալու համար: Նա ինձ ասում է, որ դեռ չէ
ստացել նրանց եղբակցութիւնները, եկէք վա-
ղը, միւս օրը, և եթէ տեսնելու լինիք մասնա-
ժողովի անդամներին՝ ստիպեցէք նրանց որ բա-
կան թարգմանութեան քննութիւնը: Այս հան-
գամանքը զարմացրեց ինձ, որ հէնց ես պէտք
է նրանց ստիպել թատրոնական գործի համար
թարգմանութեան քննութիւնը սկսելու: Իւրա-
քանչիւր օր կոչվելու մաշկով անդադար չելով
թատրոնի կառավարչի ծառայի շտաբ չեն, քե-
նած են, հազմում են, լուսավորում են կամ վա-
ղը, միւս օրը եկէք՝ խօսքերը՝ եւ վերջապէս 15
օրից բաղդ են ունենում տեսնել իշխան Ամա-
տունի և լսել նրանից, որ թարգմանութիւնը
պ. Ս. Արծրունի մօտ է: Ս. Արծրունից իմա-
նում եմ, որ դեռ չէ ստացել ինքը, այլ սպա-
սում է նրան, որ շուտով իր կարծիքը յայտնէ,
ի նկատի ունենալով, որ շուտով պիտի մեկնի
Թիֆլիսից, այլ թէ թարգմանութիւնը գտնվում
է պ. Ա. Յովհաննիսեանի մօտ: Երեւակայի, ըն-
թերցող, որ արշաւաններն պ. Ամատունիի զրան
չէմքից փոխադրվեցան պ. Ս. Արծրունի և փո-
խադարձ վարկի բանկայի մէջ տեղի Պարոն Ա.
Յովհաննիսեանը ինձ յայտնում է, որ թարգմա-
նութիւնը իր մօտ է, դեռ չէ կարդացել, այլ
պիտի կարդայ: Եւ նրան պատասխանում եմ, որ
երեք շաբաթից աւելի է իր մօտ ընկած է, էլ

սպասելի յառաջագիտութիւն ցոյց տուեց և չենք
կարող մեր խորին չնորակաւորութիւնը չը յայտ-
նել վերապետը պ. Ջափարիձէին և ուսուցիչ
Խիմչիելին:

Չը նայելով այն մեծ դժուարութիւններին, որ
տէրութիւնը կրեց Յիսկովայի մէջ ուսումնարան
բանալու ժամանակ չնորհու տեղիս հրէաների,
ներկայ ժամանակ, ամենայն ջանք գործ են դը-
նում, որ փակեն բացված ուսումնարանը հե-
տեալ միջոցներով: Կեն ուղում մասնակցել ու-
սումնարանի տեղի գնելու: և շինութեան ծախ-
սերի մէջ, գանգատներ են տալիս Գօրու գաւառի
դատաստանատներում նոյն գաւառի գանձարա-
նում վեց տարվայ միջոցում մտցած մի մի
րուբլ յետ ստանալու համար...:

Ահա, այսպիսի հնամուլ ժողովրդից որքան
վնասներ պէտք է կրէ մեր խեղճ հասարակու-
թիւնը: Իրանք խառն մէջ մնալով, մեր խեղճ
մանուկներին կամենում են սպանել մտաւորա-
պէս և գլուխը աղիտութեան անդունդը: Եւ այս-
պիսով ոչ հայերը, ոչ վրացիները, ոչ էլ տէրու-
թեան օրգանները մինչև այժմ ոչինչ ներգործու-
թիւն չը կարողացան ունենալ այդ կոյր և հնա-
մուլ հրէաների վրա:

Բ. Ժան. Տէր-Աբրահամեանց

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽՆԱԽՆԱՆԻՑ

Յուլիս 10-ին

Նախնական գաւառում թուրք և հայ գիւղերից
ամենահեշտակաւորը իր քաղութեամբ և զէնք բա-
նայնելու սովորութեամբ Արաբքերէ հայ գիւղ-
է: Այդ գիւղի հայերը սովորութիւն ունեն ըսկ-
սած 7—8 տարեկան հասակից մինչև խոր ծե-
րութիւնը զէնքերի հետ զանազան վարժութիւն-
ներ անել, իսկ կիւրակի կամ հանդիսաւոր օ-
րերը, փոխանակ շաբաթվայ ծանր գիւղական
աշխատանքներից հանգստանալու, պարագայում
են որսորդութեամբ:

Յուլիսի 5-ին այդ գիւղի չորս մարդիկ, վեր-
առնելով իրանց հրացանները և որսորդու-
թեան միւս պարագայը, գնում են կաքաւ որ-
սալու: Երբ նրանք բարձրանում են սարերի գա-
լաթի վրա, տեսնում են ջախջախ անուանալ
ձորի մէջ մի քանի մարդիկ վեր ընկած, ուղեւորով,
ձիերով, եղներով, ոչխարներով, բեռներով: Արանց
մօտ, ինչպէս պահապաններ կանգնած են լինում
քանի մի զինաւորված ձիւորներ: Մեր չորս

երբ պիտի կարդայ, Նա ինձ խոստանում է նոյն
օրը ուղարկել պ. Ս. Արծրունի մօտ:

Օրեր գլորվելով պ. Ս. Արծրունիին հաղիւ հաղ
ստանում է թարգմանութիւնը: Ինչպէս նա ինձ
վերջն ասում է, երեք օրից ուղարկել է թատ-
րոնի կառավարչին իր գրաւոր եղբակցութիւնը,
որ թարգմանութիւնը քննելով գտնում է գեղե-
ցիկ և մեր բեմին յարմար: Սրանից յետոյ շատ
մանալով՝ վերջապէս կարողանում եմ տեսնել
թատրոնի կառավարչի իշխանին:

Իշխանը ինձ տեսնելով՝ հարորդում է ինձ, որ
Ս. Արծրունուց արդէն ստացել է եղբակցու-
թիւն իմ օգտի համար, մնալիք է հիմի պ. Գ.
Սունդուկեանի կարծիքը, որից յետոյ ինձ կը
վարձատրէ ինչպէս հարկն է: Թարգմանութիւնը,
ինչպէս երեւցաւ, ուղարկված էր նրան:

Միւս օրը կասկածելով, որ մի գուցէ ուղար-
կած չը լինեն պ. Սունդուկեանի քննութեան
գնում եմ ստուգելու: Այնտեղ իմանում եմ, որ
պ. Սունդուկեանը ամբարնոց է գնացել: Ըսում
եմ, որ վերադարձել է, բայց հիւանդ: Այդ հի-
ւանդութիւնը պատճառ է լինում, որ ես ամբողջ
մի շաբաթ գնում գալիս եմ առանց նրան տես-
նելու և թարգմանութեան ուղարկված լինելը
ստուգելու, սակայն վերջապէս պ. Սունդուկեա-
նը սակաւ ինչ կազդուրվում է և ինձ ընդունում:
Նա ուրախութեամբ իր անկողնի մէջ գրում է

աղնաբերդիները փոքր ինչ մօտենալով համոզ-
վում են որ այդ ձիււորները՝ աւազակներ են:
Խողպատվածներին աղաւթու համար, որոնք ըն-
կած են կապած ձեռներով և ոտներով, որսորդ-
ներից մինը վազում է գիւղը և բերում է իր
հետ լաւ զինաւորված 150 մարդ գիւղացիներից:
Աւազակները լինում են 40 մարդ, վերջին սիս-
տեմայի հրացաններով զինաւորված: Այդտեղ
սկսում է սարսափելի կռիւ աղնաբերդի հայ
գիւղացիների և քիւրդ աւազակների մէջ: Գիւ-
ղացիները յետ են մղում քիւրդերին մինչև
Սուստ գիւղը: Աւազակների մի քանիսը սպան-
վում են և շատերը վիրաւորվում են, մասնաւոր
յայտնվում է իր քաջութեամբ աղնաբերդի կա-
րպետ Ստեփանեան: Կռիւը շարունակվելով
մինչև արեգակի մայր մտնելը, քիւրդերը թող-
նում են իրանց աւարը և տանելով իրանց հետ
միմիայն կողոպտված ձիերը և փողը, անցնում
են Արաքսի այն կողմը, Պարսկաստանի Մաքու
խանութեան հողի վրա:

Անցքի միւս օրը պ. գաւառապետը իր պահա-
պան ձիււորներով ճանապարհ է ընկնում աւա-
զակներին գտնելու համար:

Առհասարակ ցանկալի է, որ Արաքսի ափե-
րում աւելի արթուն հակողութիւն լինել քիւրդ
աւազակների վերաբերութեամբ: Լուր է տարած-
վել որ Սուստ գիւղի ուսանապատակ քիւրդերը,
որոնք վերջին պատերազմից առաջ փախել էին
Թիւրքիա, հիմա գտնվում են Պարսկաստանի Մա-
քուի հողի վրա և կազմած ունենալով աւա-
զակների ահազին խմբեր, անդադար անցնում
են ուսուց սանձաններ ու կողոպտում մեր գիւ-
ղերը: Այդպիսով աւազակութիւններ, գողութիւն-
ներ, կողոպտութիւններ անպակաս են այժմ:
Շարունակաբար գաւառում յիշեալ Մա-
քուի քիւրդերը և Սուստ գիւղից փախածները
լի են: օր չէ անցնում որ չը պատահի մարդաս-
պանութիւն, գողութիւն կամ կողոպտում: Օր
ցերեկով քիւրդերը գողթանի տակից եղ կամ գո-
մէջ են խլում և փախցնում Պարսկաստան: Բայ-
Նորաչեն գիւղի կայանից նորերումս վեց ձի
են տարել քիւրդերը գիւղի ժամանակ:

Գաւառապետը իր կազակներով և գաւառա-
կան պահապան ձիււորներով ոչինչ չէ կարող
անել:

Իշխան Ամատունի վերան իր եղբակցութիւնը,
որ պիեսան յայտնի է իր պարունակութեամբ և
թարգմանութիւնն էլ գեղեցիկ լինելով գտնում
է մեր բեմին յարմար:

Այս գրաւոր եղբակցութիւնը տանում եմ իշ-
խանի տուն: Բայց նրա միշտ գեղեցիկ տրամա-
դրված ծառան ինձ յայտնում է՝ թէ իշխանը
բարեհաճեց այս բոպէլիս տանից դուրս գնալու:
Թարգմանութեան տետրակները և պ. Սունդու-
կեանի գրաւոր հաւանութիւնը թողնում եմ ծա-
ռային, որ իշխանին յանձնէ:

Բայց այս երկրորդ գրաւոր եղբակցութիւնից
յետոյ իմ արգելքներս աւելի և աւելի շատանում
են իշխանին տեսնելու, իսկ թէ ինչի համար—
հաս պատմեմ: Ընթերցողը պիտի շատ լաւ իմա-
նայ, որ այս թատրոնական նորընտիր մասնա-
ժողովը այնպիսի անդամներից կամ անձնաւո-
րութիւններից է կազմած, որոնք իրանց յարա-
բերութիւններով իրարի աչքի լոյս են: Այս
այսպէս լինելով շատ բնական է, որ որանց մէջ
ոչինչ պաշտօնական բան չէ կարող լինել—թէ
ընդհանուր ժողով, թէ խորհրդածութիւն և թէ
հաւաքական մի ինչ և ից բան, ինչպէս և
էլ եղաւ, որովհետեւ միայն ես էի մէջտեղը
այդ մասնագիտովի մեքենան լարողը, որ մի
լինեն: Բացի սրանից՝ այստեղ ընթերցողը պիտի
նկատէ, որ մասնագիտովի մի երրորդ անդամը

ՆՆՐԻՆ ԼՈՒՐԵՐ

Անընդհատ անձրևներ, որոնք սկսել են զալ մի քանի օր է արդեն, կարող են մեծ վնաս հասցնել հունձերին, կարող են փակեցնել դեռ չը քաղած հունձերը: Հետաքրքիր է ստանալ կովկասի այլ և այլ տեղերից հունձի մասին ճիշդ տեղեկություններ:

Յայտնի է որ ամեն երկրում նմանակալ թաղելու համար պոլիցիայի թուղթերով են հարկաւոր: Այդ թուղթերով են նշանակուելու ունի, որ պոլիցիան նախ քան թաղել տալ մի նմանակալին պէտք է խմանայ, բոլորի վկայութեան հիման վրա, արդեօք հանգուցեալը երկարատե հիւանդութիւնից է մեռել, թէ յանկարծակի է վախճանուել, թէ մահվան պատճառը գուցէ մի յանցանք է, մի սպանութիւն է: Ամեն երկրում այսպէս է: Բայց թիւրքաց կառավարութիւնը այդ տեսակ պոլիցիական վկայականներից էլ օգուտ է քաղում իր սարսափելի մոլեռանդութիւնը և կեղտոտ արհամարհանքը արտայայտելու դէպքի իր հպատակ քրիստոնեաները: Մեր մի ծանօթ անդրկալի պարոն, որ ճանապարհորդել է թիւրքաց Հայաստանում և այս օրերս իր ճանապարհորդութիւնից վերադարձել է Քիֆիս, ցոյց է տուել մեղ թիւրքաց իշխանութեան կողմից քրիստոնեայ նմանակալ թաղելու համար արվող այդ տեսակ հրէշաւոր վկայագիր, որի պատճէնը նա ձեռք է բերել Հայաստանում: Ահա այդ տեսակ հրամանի բովանդակութիւնը: «Հրաման ստանալիս թաղել և կուպրի պէս սև զգեստը կրողներին: Այդ անհաւատ ուսուցիչները թող երկնքի մոտեցից կտրվեն: Ձեր աղքատ մէկը ստակել է: Դուք հրաման եք խնդրում նրան թաղելու: Մեր Ղուրմանի պատուէրների համեմատ անկարելի է նրա մարմինը հողի մէջ թաղել: Սակայն երկրի երեսը զարհուրեցնելուց ազատելու համար մի խոր փոս քանդակեք, նրան զգեստը մէջը, վրան շատ հող լցրէք և օտքով պինդ կռիւ տուէք: Եւ այդ վիրաւորեցուցիչ, մարդու ամենասուրբ զգացմունքը ստորացնող հրամանը ձեռքիս ստրուկ հայը իրաւունք է ստանում իր նմանակալին թաղելու: Ասում են որ պսակի հանդէսը կատարելու համար թիւրքիսպատակ քրիստոնեաները աւելի էլ վրդովեցուցիչ բովանդակութեան թուղթերով են ստանում տեղական թիւրք իշխանութիւնից:

Հատ ուրախ ենք որ ուսուցիչ «Порядокъ» լրագիրը, խօսելով այն տխրալ անցքի մասին, որ պատահեց Բոսթոլ-Վլադիկավասեան երկաթուղու վրա, նոյն միտքն է յայտնում, ինչ որ մենք յայտնեցինք հեռագրի ստանալու հէնց նոյն օրը, այն է որ հարկաւոր է և մեր երկաթուղիներում մտցնել ճանապարհորդների կեանքի ապահովութիւնը: Ճանապարհորդը կարող է իր կեանքը ապահովացնել իր տոմսով երկաթուղու կասսայից վերցնելու բաժնին: Յայտնվեցաւ որ դերախտութիւնը պատահել է, որովհետև չպալն էր, բէնիների տակ դրվող գե-

կարծես չէզոք դիրք է բռնում, որի եղբայրացութեան մասին իշխանը առաջուց ինձ ասել էր, որ այնքան կարեւոր չէ: Այստեղ էլ մի գաղափար կայ. բաւականա՞նք, որ գոնեայ նրանք իրար հասկանում են:

Այսպէս ուրեմն երկու զբաւոյր եղբայրացութիւններից յետոյ, որ թարգմանութիւնը հաւանած է և բեմի համար ընդունած՝ իշխանը կարծես էլ չէ ուզում ինձ անսնել: Հետեալը գնա, արի, տանն է, եկել է, զարթել է, լողացել, երբ զամ է շատ տոյսիլի ամենամահա՞մ հարցականներից յետոյ իշխանի նշանաւոր ծառան յուլիսի 14-ին առաւօտը ինձ ասում է՝ թէ իշխանը բարեհաճել է ինձ հրամայել, որ դուք 10 ժամին դաք: Կենդանի ստախոսութեան գոյներ նշմարեցի նրա երեսին: Ես հեռանում եմ և մի քանի վայրկեանից դառնալով՝ տեսնում եմ մի կառք կանգնած իշխանի դռներում: Այստեղ ինձ սպասում է մի սիրալիր: Յանկարծ դուրս է գալիս պ. Ամատունին պ. Չմէկեանի հետ... Ես դիմում եմ նրան... Դա էլ դիմում է ինձ... բայց յաղթված կերպարանքով: Երկուսս մի վայրկեան ներկայացնում ենք մի տեսակ պանթոփում... հասկանում ենք իրար, բայց չը գիտենք՝ ինչպէս սկսենք, իմ բորբոքած հարցին՝ թէ «Ինչ է նշանակում այս» — նա առաջ կտրելով՝ քայտականու է. «այս ինչ կերպ եղբայրացութիւններ են, ինչ իրաւունք

բանները, փոած էին: Մեր տեխնիկները երկի չպալները փոխելու կանոնաւոր կերպով փոխելը ստանում են, փողը գրպանն են դնում, իսկ չպալները չեն փոխում: Ասում են մօտ 70 մարդ սպանվել են:

Յուլիսի 19-ին, կիրակի օր հրատարակվեցաւ «Обзоръ» լրագրի մի համար: Այդ համարի լրջաւն ընթացիկը նպատակն է պահպանել լրագրի հրատարակութեան իրաւունքը: Խմբագիրը յայտնում է իր յայտարարութեան մէջ, որ նա կը սպասի զաւառական մամուլի համար աւելի ազատ ժամանակների:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈՂԱՐԻՒՄ

«Times» լրագրի թղթակիցը Միսսոփոյից գրում է հետեւեալ բառարկան աղբային ժողովի մասին, որ ընդունեց իշխան Ալէքսանդրի առաջարկութիւնները: Այդ ժողովը շատ նմանվում էր այն դատաստանական կատակերգութեանը, որ նորերում տեղի ունեցաւ Կ. Պոլսում Միտհադ-փաշայի դատվելու ժամանակ: Իբր թէ ժողովրդից ընտրված պատգամաւորներ էին, բայց իսկապէս նշանակված էին կառավարչական գործակաւարները: Նրանք ուղարկութեամբ լսում էին այն ճառը, որի բովանդակութիւնը նրանց առաջուց յայտնի էր և միաձայն ընդունեցին իշխան Ալէքսանդրի պայմանները, ինչպէս առաջուց վճռված էր: Միսսոփո քաղաքը հանդիսաւոր տեսարան էր ներկայացնում: Դուռնա գետի վրա կանգնած էր մի նաւ, որտեղ գտնվում էր իշխանի գլխաւոր բնակարանը և որի վրա ծածանում էր բոլորական ահաբեկիչ գործալ ոսկուց կարված բոլորական առեւծով: Իւրաքանչիւր առն առն դոն է մի գրօշակ էր կախել, իսկ բոլոր բնակիչները տօնի շոր էին հագել: Աղբային ժողովը գումարվեցաւ մի փայտեայ շինութեան մէջ, որ ժամանակաւորապէս էր կառուցված: Ամբիօնի տեղը մետաքսեայ ձոթով ծածկված և ոսկեզօծ զարդարանքներով զահէ էր դրած: Ժամի 10-ին պատգամաւորները սկսեցին գումարվել: Նրանցից շատ քչերը, որոնք առաջին տեղերի վրա նստեցին, Քրակ և սպիտակ ձեռնոցներ էին հագել: Մնացածները դիւղական հագուստ ունէին: Երբ իշխանը երևեցաւ, նրան աղմկալի ծափահարութիւններով ընդունեցին: Նա արտասանեց իր ճառը և նրա պայմանները միաձայն ընդունվեցան:

ունեն այսպէս գրելու, այդ ինչ տեսակ զարմանալի մասնաժողով է, ես այսպէս չէի ուզում, և կարծես թէ մեղաւորը ես եմ, որ մասնաժողովը այդպէս է, որ և իր կամքին անյարմար եղբայրացութիւն է տուել: Վրայցէք ասացէք նրանց, չարախալութեան է, որ մի ամբողջ թղթի վրա վճիռ կայացնեն թարգմանութեան ընդունելութեան մասին երկուսի ստորագրութեամբ, այդ կը բերէք և ես ձեր ցանկացած վարձատրութիւնը կը վճարեմ: Ագիւ ընթերցող, լաւ ուղարկութիւն դարձրէք՝ թէ ես իբրեւ մի օտար անձն, թարգմանիչ գործով ինչ դեր եմ խաղում, որ ես պիտի գնամ նրանց գլխին յորդորանք կարգամ, որպէս զի նրանք մի պաշտօնական ուղղութեամբ գործ են բռնեց, միջնդեան այդ արդէն իրանց գիտնալու գործն է: Բայց ես այնպէս ինչ արած... գնացի:

Պարոն Ս. Արծրունու մօտ գնալով՝ վրդովեցաւ նա՝ թէ «բանի որ իմ եղբայրացութիւնը տուել եմ — էլ ինչ կը նշանակի մի նոր թուղթ»: Բայց զիջանալով իմ խնդրանքի՝ մի թղթի վրա գրեց իր արդէն երկու անգամ գրաւոր կերպով յայտնած ընդունելութիւնը իմ թարգմանութեան մասին: Գետոյ դիմելի պ. Ստանուկեանցին: Այստեղ հարկաւոր եմ համարում նկատել, որ այս իմ երկար ու ձիգ ճանապարհորդութեանցս վրա կասկածանք էին յայտնում մարդիկ՝ թէ

իշխանը մի ուրիշ ճառով շնորհակալութիւն յայտնեց պատգամաւորներին:

ԻՏԱԼԻԱ

Խաղական կառավարութիւնը իր ներկայացուցիչներին օտար պետութիւնների մօտ մի շրջաբերական ուղարկեց այն փողոցային անկարգութիւնների մասին, որոնք պատահեցան հանգուցեալ պապ Պիոս IX մարմինը տեղափոխելու ժամանակ: Իր կողմից այժմեան պապն էլ պետութիւններին մի շրջաբերական ուղարկեց այդ անցքի մասին: «Diritto» լրագիրը հերքում է այն լուրը, իբր թէ կառավարութեանը զանգաւաններ են տուած այդ անկարգութիւնների առիթով վատիկանի ծառայարարները: Վետտեհանի, որ միջոցով էր կարգիւնարների և Հռոմի պրեֆեկտի մէջ, գրաւոր խոստում տուեց, որ հանգուցեալ պապի մարմնի տեղափոխութիւնը շրջաբերական չի կատարվի, այլ նրան կուղեկցեն ընդամենը երկու կամ երեք կառքեր, բայց այդ խոստումը չիրագործվեցաւ: Պապը խորհրդի հրաւիրեց օտար պետութիւնների ներկայացուցիչներին իր մօտ և առաջարկեց նրանց յայտնել իրանց կառավարութիւններին, թէ որքան անագործ աշխարհական իշխանութիւնը խաղական անկարգութիւններին, թէ որքան անապահով էր այնպիսի անկարգութիւններ պատահեցան պապի մարմնի տեղափոխութեան ժամանակ և թէ մինչև ո՞ր աստիճան խաղական կառավարութիւնը անպարտ է պապական անխախտութեան ապահովութեան մասին օրէնքը կատարելու համար: Աւետ XIII պապը յայտնեց, որ եթէ մեռած պապին այդպիսի վիրաւորանքներ են հասցրած, ուրեմն ինքը բոլորովին չէ կարող վատիկանից դուրս գալ, որպէս զի նրան էլ նոյն բանը չանեն: Հանգուցեալ պապի մարմնի տեղափոխութեան ժամանակ կալանաւորվածները մեղադրված են կրօնը անպատեւելու և պոլիցիական իշխանութեանը ընդդիմանալու մէջ և դատաւարութեան են չորս ամսական կալանաւորութեան և 100—400 Քրանկ տուգանքի: Նրբ մեղադրվածների պաշտպանը արտասանում էր իր ճառը, դատարանի մէջ եղած հասարակութիւնը սկսեց նրան ծափահարել և այդ պատճառով դատարանի նախագահը պատուիրեց հեռացնել հասարակութեանը դահլիճից: Նրբ դատաւարութեանը նստում էին բանտային կառքերի մէջ, ամբոխը նրանց կեցցէներով ողջունեց: Այնուհետեւ ամբոխը ուղևորվեցաւ

երկի իշխան Ամատունին չէ սպասում, որ այդ երկու անձները մէկ թղթի վրա միասին ստորագրեն: Պարոն Ստանուկեանցը վրդովեցաւ, երբ լսեց իմ նոր խնդիր և ասաց. «Ի՞նչ մի պաշտօնական կերպով էլ պատասխան ասեմ և ինչ է նշանակում այդ ձեռք. ձեր բերանովը է մեղ հետ խօսում և մենք էլ ձեր բերանովը յայտնում ենք նրան, որ ընդունում ենք և գրաւոր կերպով էլ յայտնել ենք: Բայց վերջապէս իմ գրութիւնս խնայելով՝ բարի եղաւ իմ խնդրանքը զիջանալու: Վերջապէս մի թղթի վրա երկու ստորագրութեամբ գոկումնոյր ծոցումս մտայ իշխան Ամատունու մօտ: Թղթին նայելով, իշխանը գրեւոր չարթեց և ասաց. «Էլի էնպէս չէ, ինչպէս ես ուզում եմ: Այստեղ ես միացի չուրա՞ծ կանդնած, ինչպէս ասում են՝ ամպերից վայր ընկած: Ես առանց մի որ ե և եկամուտի, առանց մի ժառանգութեան, թէ ինչպէս ծաւրել եմ թանաք, գրիչ. կամ վառելու լոյս — այդ էլ Աստուած գիտէ, առանց միջոցների չորս ամիս նստել, աշխատել եմ, կարծում էի թէ գրականութեանն էի ծառայում, սպասում էի մի վարձարարութիւն ստանալ, որ զէթ իմ երեխաներիս անհրաժեշտ պետքները կատարելով միւս թարգման... Եւ ինչ եմ լսում իշխանից: Վրդահաւոր ժողովը վճռել է թարգմանութիւնների հա-

դէպի «Frusta» կղերական լրագրի խմբագրատունը և գջլեց նրա դրանը կախված նշանակը: Պոլիցիան շատերին կալանաւորեց: Նոյն օրը երեկոյեան ամբոխը հաւաքվեց Հռոմի հրապարակներից մէկի վրա և ցոյցեր արաւ: Այդտեղ էլ պոլիցիան շատերին կալանաւորեց, չը նայելով, որ ամբոխը կանչում էր «կեցցէ խաղական թաղաւորը»:

ԱՆՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

Չեխիայի ազգաբնակչութեան այժմեան տրամադրութիւնից պարզ երևում է, որ վարչական անձանց փոփոխութիւնը, առանց փոխելու օրէնքները և հիմնարկութիւնները, կարող է միայն ժամանակաւորապէս հանգստացնել հասարակութեանը, բայց չէ կարող բաւականութիւն տալ ժողովրդական շահերին և խաղաղացնել երկիրը:

Բոհեմիայի փոխարքան և մի քանի այլ վարչական պաշտօնական փոխված են: Այս փոփոխութիւնները կարող են ժողովրդի մէջ զանազան յոյսեր և ենթադրութիւններ ծագեցնել:

Չեխական մամուլը նոր նշանակված վարչական անձանց համարում է խաղաղասիրական քաղաքականութեան ներկայացուցիչներ, ժողովրդական ինքնավարութեան կողմնակիցներ և զլխաւորապէս բարխիթը՝ գործիչներ, որոնք ոչ մի կուսակցութեան չեն պատկանում և կարող են անկողմնապահութեամբ գնահատել չեխների իրաւացի քաղաքական պահանջները: Միւս կողմից գերմանական մամուլը կարծիք է յայտնում, որ նոր նշանակված պաշտօնականը գերմանացիներ են և որ նրանք կը հետևեն հին ուղղութեանը և կաշխատեն, որ գերմանացիները Չեխիայի մէջ գերիշխող ժողովուրդ լինեն: Այդ երկու կողմերն էլ իրաւունք ունեն իրանց կարծիքը ձիջը համարել, որովհետեւ նոր կառավարիչները իրանք ոչինչ չեն յայտնել և նրանց գործունեութեան մասին կարելի է միայն ենթադրութիւններ անել: Բերլինի մէջ հրատարակվող «Post» լրագրի թղթակիցը հաղորդում է, որ իտալական կառավարութիւնը կամեցել է իմանալ աւստրիական կառավարութեան կարծիքը մի առանձին դաշնագրութեան մասին խաղաղի և Աւստրո-Ունգարիայի մէջ արեւելեան գործերի վերաբերութեամբ: Իտալիան առաջարկում է առեւտրական դաշնագրութիւն կապել, որպէս զի երկու պետութիւններից մէկը չէզոք մնայ, երբ միւս

մար հասցնել 5 պրօցենտ վճարել, երբ թարգմանութիւնը կը ներկայացվի: Ուրեմն հասցնել ամենից շատ հաշուելով 500 ր. այդ կանէ 25 ր., բայց որովհետեւ ով դիտել երբ կը ներկայացվի և գուցէ հասցնել 100 րուբլից աւելի չը լինի, ուրեմն կանէ 5 րուբլի վարձատրութիւն — բայց ցաւակցելով ձեռք գրութեանը, (ինձ է ասում) ես կը տամ 25 րուբլի: Այդտեղ ներկայ գտնվող նախագահի նոր ընտրված օգնական արաւելցեցէ պ. Մուխոմիլսկի գտնում է ինձ և ասում է թէ «Ինչ էք զարմանում, մենք ունենք մարդիկներ, որոնք ուրախութեամբ վերցնում են 1 րուբլի գործողութեան համար: Իմ թարգմանած «Ревизоръ»-ը հինգ գործողութեամբ է, ուրեմն կանէ 5 րուբլի:

Ես յետ ուղեցի իմ թարգմանութիւնս և մի վայրկեան մտածեցի, որ տանը իմ երեխանքս ինձ սպասում են... պատուի զգացմունքը յաղթեց, գլուխ առել և դուրս եկայ: ՀՀամար պէտք է լինի նա, ով չը գովաբանէ այս գործողներին: Վրայր պիտի լինի նա, ով չը տեսնէ դրանց բարի գործը... Վրայր պիտի լինի, ով չը լսէ դրանց փառաբանութիւնը... Ես այստեղ իմ ողնաշարիս վրա զգացի թէ ինչ կը լինէր արեւոք մի աղբիւ օրիորդի դրութիւնը այսպիսի ազգային գործողների մէջ...:

Կ. ՏԵՐ-ԱՍՏԱՆԱՎԱՐԵԱՆ

սը մի որ և է երկիր նուաճէ Բալկանեան թերակղզու վրա Ազրիական և Եգիպտեան ծովերի ափերին: Բարձր Հայմարէ այդ նախագիծը ուրախութեամբ է ընդունել և բանակցութիւնները այդ նոր համաձայնութեան պայմաններէ մասին երկու շուտով կը սկսին: «Post» լրագիրը հաւատարմութեամբ է, որ այդ տեղեկութիւնը նա ստացել է հաստատ աղբիւրներէ: Այդ տեղեկութեան հետ կից լրագիրները հաղորդում են, որ օգոստոսին իտալական թագաւոր Հումբերտ կողմէն իշխող զեմանական և աւստրիական կայսրներէ հետ տեսակցելու համար Մի և Նոյն ժամանակ իտալական «Opinione» լրագիրը ապացուցանում է, որ անհրաժեշտ է մի դաշնագրութիւն կապել իտալիայի և Աւստրո-Ունգարիայի մէջ Բալկանեան գործերի մասին:

ՅԱՐԱՆՍԻԱ

Յուլիսի 14-ի տօնը փարիզի մէջ մեծ շքեղութեամբ կատարվեցաւ: Ամենքի հետաքրքրութիւնը գրաւում էր Լոնշանի զօրախաղը: Երկրորդ ժամին սկսեցին զօրքերը հաւաքվել և իրանց տեղերը բռնել: Այնուհետեւ եկան Լէօն Սէ և Գամբետտա բազմաթիւ պատուաւոր պահապաններով: Նրանք տեղ բռնեցին պաշտօնական անձանց համար պատրաստված ծածկոյի տակ, որտեղ հաւաքվել էին օտար պետութիւնների ներկայացուցիչները և Ֆրանսիական ժողովների անդամները: Ժամի երկուսին, թընդանօթներ արձակելով և փողեր հնչեցնելով, յայտնեցին հանրապետութեան նախագահի գալուստը: Նախագահի կառքի մէջ նստած էր մինիստր Ֆերրի, իսկ միւս մինիստրները և բարձրաստիճան անձինք հետեւում էին կառքին: Այնուհետեւ եկան պատերազմական մինիստր Ֆարը և երաժշտութիւնը սկսեց Մարսելիեզ ամեն: Զօրախաղը այս անգամ աւելի լաւ անցաւ քան թէ անցնայ տարի: Երեւում էր, որ Ֆրանսիական զօրքերը մեծ առաջադիմութիւն էին գործել: Հանրապետութեան նախագահը շնորհակալութիւն յայտնեց պատերազմական մինիստրին և հետագաւ: Ամբողջը անդադար կանչում էր «կեցցէ հանրապետութիւնը»: Երբ վերադառնում էր Գամբետտա, ժողովուրդը պատուեց նրան, աղմկալի ցոյցեր անելով: Ստրասբուրգի արւանի առաջ ցոյցեր եղան ի յիշատակ Ելզգաս-Լօտարինգիայի, բայց այս տարի այդ ցոյցերը առաջվայ պէս աղմկալի և ոգևորված չէին: Կոմունիստները ցոյցերն էլ անելատելի կերպով անցան:

Ալժիրից ստացված տեղեկութիւնները համեմատ Բու-Ամեմ նորից ազատվեցաւ Ֆրանսիական զօրքերի հաղթանակներից: Լրտեսները տեղեկացել են, որ նա ուղևորվել է դէպի հիւսիս արևելք, որպէս զի ջարդի Ֆրանսիայի մէջ հաւաքված Ֆրանսիացիներին հաւատարմութիւն 1000 արաբներին: Բու-Ամեմ իր ձեռքի տակ ունի 1200 հետեւակ և 1500 հեծելազօրք: Տունիսի բոլոր ցեղերը երբեք են ընդդիմանալ եւրոպացիներին: Ֆրանսիացիները Տունիսի մէջ հանգիստով կատարեցին իրանց ազգային տօնը:

Եթովպիայի մինիստրը Սֆակից ստացաւ հետեւեալ հեռագիրը: Ֆրանսիական նաւատորմը հինգ շարժի հասաւ Սֆակս, իսկ ուրբաթ սկսեց ռմբակոծել քաղաքը և պատրաստութիւն տեսնել յարձակման համար: Այսօր, շաբաթ, Ֆրանսիական զօրքերը յարձակվեցին Սֆակսի վրա և գրաւեցին նրան: Ապստամբները քաջութեամբ ընդդիմադրում էին: Ֆրանսիացիների կողմից սպանված են 8 մարդ և 40 վիրաւորված:

Մինիստրների խորհրդի մէջ ներքին գործերի մինիստր Կոստան ներկայացրեց նախագահական պրեֆիկտների ղեկավարումը յուլիսի 14-ի տօնի պատճառով: Այդ դեկլարացիոն կրեւում է, որ ազգային տօնը ամեն տեղ մեծ շքեղութեամբ է կատարվել: Այնու ամենայնիւ մի քանի տեղ հակահանրապետական ցոյցեր են կատարված: Ի միջի այլոց Օրանի մէջ տեղական դատարանի նախագահը կարեց այն թիւը, որի վրա պէտք է լապտերներ կապվէին դատարանը զարդարելու համար: Հեծելազօրքի մի քանի օֆիցերներ հրաժարվեցան տօնին մասնակցելուց և արգելեցին զինուորներին դուրս գալ զօրանոցներից: Այսպիսի դէպքեր շատ քիչ են պատահել և նրանք ոչինչ ազդեցութիւն չէին կարող ունենալ հասարակութեան վրա:

ՆԱՄԱԿ ԱՌԱՐՈՒՄԻՑԻՑ

Վիեննա, 12 յուլիսի

Ձեր թղթակիցը փարիզից հաղորդած էր ձեռք, որ երեւելի ֆրանսիացի արեւելագետ և հայագետ պ. Գիւլօրիէ դիտարկութիւն ունի հրատարակել փարիզում մի ֆրանսիէն թերթ, որ լինէր թիւրքաց հայերի շահերի պաշտպան: Եւ ինքս համակրեմով այդ տեսակ գործին, բացի պ. Գիւլօրիէից, ամեն ջանք գործ դրեցի սրան նրան համոզել որ հիմնի կամ առանձին թերթ ֆրանսիէն լեզուով, որ լինէր թիւրքաց հայերի թարգման, կամ բաց անի արդէն եղած մի օրաթերթի մէջ մի բաժին, որ կարելի լինէր դիտել թիւրքաց Հայաստանին նպատակ ունի և այլ յօդուածներ:

Փարիզի եղած ժամանակս, տեղեկանալով որ պ. Պոլսի հայերը մերթել էին պ. Գիւլօրիէին որ և է նիւթական կամ բարոյական նպատակ հասցնել իր մտադրած թերթը հիմնելու համար, տեղեկանալով մի և նոյն ժամանակ ձեր թղթակցի գրուածից որ 200 բաժանորդ բաւական էր պահպանել այդ տեսակ հրատարակութիւն, ես անձամբ դիմեցի յարգելի հայագետին, խոստանալով վճարել իրան որ և է ձանապարհով 200 բաժանորդի գումարը: Մի և նոյն ժամանակ պատմեցի նրան, որ «Մշակ» միջոցով արդէն արձագրվում է այդ խնդիրը ռուսահայերի մէջ: Գալարեմբելով իմ խօսքերից պ. Գիւլօրիէ սկսեց բանակցել մի հրատարակչի հետ, բայց դժբաղդաւոր գործը զուրկ չեկաւ, որովհետեւ յայտնվեցաւ, որ մի նոր օրագիր հիմնելու համար նշանաւոր գումար է հարկաւոր: Ապա խնդրեցի մի տարածված լրագրի խմբագրին էլ նուիրել իր ամենօրեայ թերթի մի էջ թիւրքաց հայերի գործի պաշտպանութեանը: Նա խոստացաւ ինձ երբեմն յօդուածներ հրատարակել, որոնք կը վարձատրվեն:

Փարիզից եկալ Վիեննա և տեսնեցայ այստեղ հրատարակվող «Journal d'Orient» շաբաթաթերթի խմբագրի հետ: Այդ թերթը ուղարկվում է նախարարներին, դեսպաններին և քաղաքական այլ բարձր շրջաններ: Արեւելեան խնդրի վերաբերութեամբ թերթը հետեւում է Ռուսաստանին բարեկամ քաղաքականութեանը: Սոսեցի խմբագրի հետ և սա համաձայնեց շարունակ պաշտպանել իր թերթի մէջ թիւրքալի հայերին, դարձաւ ռուսաց կառավարութիւնը հայերին բարեկամ և պաշտպան ճանաչելով, ի հարկէ:

Այսօր ուղարկվեցաւ ձեռք և ուղիւններին այսօրվայ № 30, իբրեւ օրինակ և այս ձեռք կը շարունակվի: Միայն պէտք են բաժանորդներ և թղթակցութիւններ: Լրագիրը պահպանելու համար Յոյս ունեմ, որ նրանք, որոնք պատրաստակաւ նախաձեռնեցին Գիւլօրիէի թերթը պահպանելու, այժմ կը պահպանեն Վիեննայի «Journal d'Orient» լրագիրը, որ յանձն առաւ հայոց օրգան դառնալու:

Կարող էք այդ թերթի համար բանալ բաժանորդագրութիւն: Գինը 8 րուբլ է տարեկան, կամ 4 րուբլ կէս տարեկան, այսինքն մինչեւ յունվար ամիսը 1882 թվ: Խորհուրդ եմ տալիս որ փոփոխեք ուղարկվել «Մշակ» խմբագրութեանը, կամ բաժանորդները կարող են փողը իրանց հասցնել ուղղակի Վիեննա ուղարկել: Հասցեն թէ բաժանորդ գրվելու, թէ յօդուածներ հաղորդելու համար հետեւեալն է Vienne (Autriche)

M. F. Salles, Rédacteur en chef du «Journal d'Orient» Rauhensteingasse, 10.

Այդ թերթի խմբագրի համար գտայ և մի թարգմանիչ հայոց լեզուից: Կարող էք յօդուածներ ուղարկել և հայերէն լեզուով: Նրանք կը թարգմանվեն: Բայց, ի հարկէ, աւելի լաւ է եթէ յօդուածները ֆրանսերէն գրված լինեն: Մեծ յոյս ունեմ որ «Journal d'Orient» բազմաթիւ բաժանորդներ կը գանի ռուսահայերի մէջ, որոնք իրանց այդ տեսակ բարոյական և նիւթական նըպատակով մեծ օգնութիւն կը տան պ. Սալլէսին և միջոց կը տան նրան օրինաւոր կերպով մշակելու հայոց խնդիրը:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Յայտնի է որ տպագրութեան գիւտից առաջ գրքերը տարածվում էին գրչադիր օրինակներով և օրինակելիս շատ և շատ սխալներ էին սպրդվում: Նրանց մէջ, Բոլոր հին յունաց, հռոմայեց և հայոց դասական հեղինակութեանց օրինակները, որ այժմ գտնվում են այլ և այլ գրատուններում, լիքն են տպագրական, կամ, աւելի ճիշտն աւել՝ ձեռագրական վրիպակներով: Հին հռոմայեցի մատենագիր Տերենտիուսի գրուածքներում, որոնք միայն վեց կտոր են, կան 30,000 տարբեր ընթերցումներ: Այս ընդհանուր վիճակից դերծ չեն մնացել և Ս. Գրքի օրինակները թէ նրա յունարէն, թէ հայերէն օրինակները, այնպէս որ այսօր Ելզմիածնում եղող 4—500 ձեռագիր Նոր կտակարաններից մէկը բաւաւ ըստ բաւ մի և նոյնը չէ մի ուրիշի հետ, ամեն մէկն ունի իր մասնաւոր տարբեր ընթերցումները: Նոր կտակարանի հին յունարէն ձեռագրիցներն էլ այդպէս այլ և այլ ընթերցումներ ունենալով, այս վերջի ժամանակներումս Ամերիկայում մի ռուսացիական ժողով կազմաւորված 300 տարի սրանից առաջ անգլիէն լեզուով թարգմանված Նոր կտակարանը բազմաթիւ յունարէն ամենաշին և ընտիր օրինակների հետ և ըստ այժմ սրբագրել անգլիէնէն: Այդ ժողովը երկար ժամանակ անձանձիր աշխատելուց և խղճի մտքը քննելուց յետոյ ներկայացրեց անգլիէն Նոր կտակարանը իր արած լին ինչ փոփոխութիւններով: Ամերիկայի հոգաւոր Զեկագո քաղաքում հրատարակվող մեծաւոր լրագիրը անկաւորաց սպասում էր ժողովի գործն աւարտելուն և իսկոյն առաւ ձեռագիրը և այդ ամբողջ Նոր կտակարանը մի օրվայ մէջ տպելով իր լրագրի մի համարի հետ ուղարկեց իր 200,000 ստորագրողներին իբրեւ յաւելում: Բոլոր տպուածը բռնում է 16 երես «Times» լրագրի դրբով: Տպելիս գրադրված էին 92 շարող և 5 սրբագրիչ, տպագրութիւնը սկսվեց առաւօտեան ժամը 10-ին և վերջացաւ երեկոյեան ժամը 10 ին:

Հնարագետ ամերիկացիները մտադրվեցին Ատլանտեան ովկիանոսով օդային ճանապարհորդութիւն անել: Մէկ ժողովի մէջ, Նիւ-Եորկում, պրոֆէսոր Սամուել Կինգ օդագնացի բարեկամները բաւական նշանաւոր գումար հաւաքեցին օդապարիկ շինելու համար, որի վրա կարելի լինի Ամերիկայից դէպի Եւրոպա ճանապարհորդել: Կինգը միտք ունի, գոտապարիկ օդուածութեամբ չը թող տալ, որ օդը կարողանայ անցնել գնտակի պատերի միջից և կարծում է որ վեց օր շարունակ կարողանայ օդի վրա մնալ:

Ինչպէս յայտնի է, դեռ ապրիլի 8-ին վախճանվեցաւ Չինաստանի կայսրուհին. բայց նրա մարմնի թաղումը եկող գարունից վաղ չի լինի: Կայսրուհուն զմեռեցին և դաժանի մէջ պառկեց: Երբեք զրեցին պալատի աղօթատան մէջ: Այնտեղ յաճախ գնում են Լիպսիտական ընտանիքի անդամները և դոնոր են բերում հանգուցեալի նշխարներին: Այժմ արդէն սկսվեցան ահագին պատրաստութիւններ ապագայ թաղման համար:

Վիկտոր Զիգֆրիս արձան կանգնեցնելու համար կազմված մասնաժողովը հետեւեալ նոր յայտարարութիւն հրատարակեց. «Փետրվարի 27-ին ամբողջ փարիզը և փարիզի հետ ամբողջ Ֆրանսիան և Ֆրանսիայի հետ միասին ամբողջ աշխարհը—տօնում էր ի պատիւ մեծ բանաստեղծի և մեծ քաղաքացու: Այդ օրը ժողովուրդը պահանջեց, որ դեռ ևս կեսնքի ժամանակ արձան

կանգնվի Վիկտոր Զիգֆրիս: Այդ արձանը կը կանգնեցնվի ի պատիւ զարմանալի հանճարի, որ նուիրված էր ճշմարտութեան և արդարութեան գաղափարներին: Ստորագրութիւնը յուլիսի 14-ից բացվեցաւ:

Նէյշտեմիում պատահած հակահրէական անկարգութիւնների մասին Վօլֆի ընկերութեանը հեռագրում են այդ քաղաքից հետեւալը: «Լրագրական երկու հրէայ աշխատակիցների և մէկ քրիստոնեայի մէջ պատահած կռիւ պատճառով, որի ժամանակ քրիստոնեան եօթը վէրք ստացաւ գլխում, անցած երկու զինքները անկարգութիւններ պատահեցան: Զբէսների տնրի մի քանի ապակիներ կտրտեցին: Մօտ 20 կատաղիներ բանտարկված են:»

Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ յուլիսի 13-ին Փարիզում մուսու ռժտուն և չորս տարեկան հասակում ֆրանսիական ինտիմուտի անդամ և առաջին աստիճանի պատուաւոր լեզիոնի չքանչանի ասպետ, Շարլ Ժիլօ, Նա Փարիզի իրաւաբանական ֆակուլտետի պրոֆէսոր էր և բարձրագոյն կրթութեան ընդհանուր տեսուչ, և մի ժամանակ ազգային լուսաւորութեան մինիստր էր:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յուլիսի: «Правит. Вѣстн.» լրագրի մէջ տպված է ներքին գործերի մինիստր Կոմս Իդնատիւսի հետեւեալ հեռագիրը յուլիսի 17-ից. «Թագաւոր Կայսր Իր Բարձր. Ընտանիքով այսօր առաւօտ հասան Մոսկվա: Գլխաւորութիւնը ուղեւորված էր: Նրանք այցելեցին մայր և եկեղեցիները և Փրկչի եկեղեցին: Մոսկվայի քաղաքացիներից աղ և հաց ընդունելուց յետոյ Թագաւոր Կայսրը ասաց. «Այն մեծ վիշաղ տանելուց յետոյ, որ պատահեց ինձ, իմ ընտանիքին և ամբողջ Ռուսաստանին, ես վերջապէս բաղդաւոր եմ, որ կարողացայ կատարել իմ փափագը և այցելել հին առաջնադէպ մայրաքաղաքը: Շատ շնորհակալ եմ այն զեղեցիկ ընդունելութեան համար, որ արիք ինձ, Կայսրուհուն և երեխաներին: Հանգուցեալ Հայրս շատ անգամ շնորհակալութիւն է յայտնել Մոսկվային նրա հաւատարմութեան համար: Մոսկվան միշտ օրինակ է եղել ամբողջ Ռուսաստանի համար: Յոյս ունեմ, որ այսուհետեւ էլ այդպէս կը լինի և, ինչպէս առաջ Մոսկվան վկայել է, նոյնպէս էլ այժմ կը վկայէ, որ Ռուսաստանի մէջ Թագաւորը և Ժողովուրդը կազմում են միահնգի և ամուր մի ամբողջութիւն:»

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յուլիսի: «Правит. Вѣстн.» լրագրից տպեց հետեւեալ հեռագիրը Մոսկվայից յուլիսի 19-ից. «Թագաւոր Կայսրը. Թագուհի Կայսրուհին և Մեծ Իշխանները այսօր այցելեցին Սերգիեվսկայա Լավրա վանքը: Միաբարձրեալ օրհնեց նըրանց ոսկեպատ պատկերներով: Ժողովուրդը ամեն տեղ նրանց Մեծութիւններին ոգևորված կերպով է ընդունում:»

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յուլիսի: Պետական բանկի 50% տոնակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 75 կ., երկրորդ 94 ռ. 37 կ., երրորդ 94 ռ. 75 կ., չորրորդ 94 ռ. 25 կ., ներքին առաջին 50% փոխառութեան տոմսակը արժէ 225 ռ. 50 կ., երկրորդ 224 ռ. 25 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ռ. 12 կ., երկրորդ 92 ռ., երրորդ 92 ռ., ոսկի 7 ռ. 78 կ.: Ռուսաց 1 րուբլ Լօնդոնի վրա արժէ 25,59 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 218 մարկ, 25 պֆ., փարիզի վրա արժէ 269 ֆրանկ 50 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

